



Ստրասբուրգ, 2015 թ. սեպտեմբերի 11

CDL-PI (2015)019

Կարծիք No. 757/2014

Or. Engl.

**«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական  
հանձնաժողով**

**(Վենետիկի հանձնաժողով)**

**ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ՝ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ 8-րդ, 9-րդ, 11-16-րդ  
ԳԼՈՒԽՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Կարծիքը կազմվել է պարոն Սերջիո Բարտոլեի (փոխարինող անդամ, Իտալիա), պարոն Այվարս Էնձինսի (անդամ, Լատվիա), պարոն Քրիստոֆ Գրաբենվարթերի (անդամ, Ավստրիա), տիկին Տայլա Խաբրիկայի (անդամ, Ռուսաստանի Դաշնություն), պարոն Եվգենի Տանչևի (անդամ, Բուլղարիա), պարոն Կաարլո Տուրրիի (անդամ, Ֆինլանդիա) դիտարկումների հիման վրա

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

I. Նախաբան..... 3

II. Կարծիքի ընդգրկման ոլորտը..... 4

III. Վերլուծություն..... 5

    Ա. Գլուխ 1. Սահմանադրական կարգի հիմունքները ..... 5

    Բ. Գլուխ 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները..... 7

    Գ. Գլուխ 4. Ազգային ժողովը..... 10

    Դ. Գլուխ 5. Հանրապետության նախագահը..... 13

    Ե. Գլուխ 6. Կառավարությունը..... 13

    Զ. Գլուխ 7. Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը..... 14

    Է. Գլուխ 8. Դատախազությունը և քննչական մարմինները..... 17

    Ը. Գլուխ 9. Տեղական ինքնակառավարման մարմինները..... 18

    Թ. Գլուխ 10. Մարդու իրավունքների պաշտպանը..... 19

    Ժ. Ընդհանուր նկատառումներ 11-14-րդ գլուխների վերաբերյալ..... 20

    Ի. Գլուխ 11. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ..... 21

    Լ. Գլուխ 12. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը..... 21

    Խ. Գլուխ 13. Վերահսկիչ պալատը ..... 22

    Ծ. Գլուխ 14. Կենտրոնական բանկը ..... 23

    Կ. Գլուխ 15. Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն..... 23

    Հ. Գլուխ 16. Եզրափակիչ և անցումային դրույթներ..... 25

IV. Եզրահանգումներ..... 26

## I. Նախարան

1. Այս երկրորդ նախնական կարծիքը լրացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ կազմված նախնական կարծիքին, որը հրապարակվել է 2015 թ. հուլիսի 30-ին (CDL-PI(2015)015rev):
2. Սահմանադրության փոփոխությունների նախագծի 8-րդ, 9-րդ, 11-15-րդ գլուխները Վենետիկի հանձնաժողովն ստացել է 2015 թ. օգոստոսի 6-ին:
3. Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը (այսուհետ՝ Սահմանադրական հանձնաժողով) 2015 թ. օգոստոսի 20-ին հաստատեց Սահմանադրության փոփոխությունների նախագիծը: Այս տեքստը (որը ներառում էր բոլոր փոփոխությունների վերանայված տարբերակը, ինչպես նաև եզրափակիչ և անցումային դրույթների վերաբերյալ 16-րդ գլուխը) Վենետիկի հանձնաժողովն ստացել է 2015 թ. օգոստոսի 22-ին (CDL-REF(2015)034):
4. 2015 թ. օգոստոսի 24-25-ին Երևան ժամանեց Վենետիկի հանձնաժողովի պատվիրակությունը, որի կազմում էին պարոն Քրիստոֆ Գրաբենվարթերը և պարոն Այվարս Էնձինսը՝ որպես զեկուցողներ, ինչպես նաև տիկին Սիմոնա Գրանատա-Մենյինին՝ Վենետիկի հանձնաժողովի քարտուղարի տեղակալը: Պատվիրակությունը աշխատանքային հանդիպում ունեցավ Սահմանադրական հանձնաժողովի հետ, ինչպես նաև հանդիպումներ ունեցավ Հանրապետության Նախագահի, քաղաքացիական հասարակության և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Վենետիկի հանձնաժողովի զեկուցողների առաջարկությունների լույսի ներքո լրացուցիչ փոփոխությունների վերաբերյալ համաձայնություն կայացվեց Սահմանադրական հանձնաժողովի հետ:
5. 2015 թ. օգոստոսի 21-ին Նախագահին Ազգային ժողով ներկայացրեց Սահմանադրության փոփոխությունների նախագիծը:

6. Սահմանադրական հանձնաժողովը 2015 թ. օգոստոսի 29-ին և սեպտեմբերի 1-ին Վենետիկի հանձնաժողովին ներկայացրեց որոշ լրացուցիչ փոփոխություններ (CDL-REF(2015)036):

7. Սույն կարծիքը կազմվել է Սահմանադրության փոփոխությունների նախագծի՝ Հայաստանի իշխանությունների կողմից տրամադրված անգլերեն թարգմանության հիման վրա: Հնարավոր է, որ թարգմանությունը հստակ չարտացոլի օրիգինալ տարբերակը, և որոշ նկատառումներ և բացթողումներ կարող են պայմանավորված լինել թարգմանության հետ կապված խնդիրներով:

8. Սույն կարծիքը կազմվել է զեկուցողների դիտարկումների հիման վրա. այն ուղարկվել է Հայաստանի իշխանություններին որպես նախնական կարծիք և հրապարակվել է 2015 թ. սեպտեմբերի 11-ին:

## **II. Կարծիքի ընդգրկման ոլորտը**

9. Սույն երկրորդ նախնական կարծիքը վերաբերում է 8-րդ (Դատախազությունը և քննչական մարմինները), 9-րդ (Տեղական ինքնակառավարման մարմինները), 11-րդ (Կենտրոնական ընտրական հանձնաժողովը), 12-րդ (Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը), 13-րդ (Վերահսկիչ պալատը), 14-րդ (Կենտրոնական բանկը), 15-րդ (Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն) և 16-րդ (Եզրափակիչ և անցումային դրույթներ) գլուխներին:

10. 1-ին (Սահմանադրական կարգի հիմունքները), 2-րդ (Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները), 3-րդ (Սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները), 4-րդ (Ազգային ժողովը), 5-րդ (Հանրապետության նախագահը), 6-րդ (Կառավարությունը), 7-րդ (Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը) և 10-րդ

(Մարդու իրավունքների պաշտպանը) գլուխները նախկին նախնական կարծիքի ուսումնասիրության առարկան են եղել (CDL-PI(2015)15rev), և երկրորդ նախնական կարծիքում դրանց անդրադարձ է կատարվում այն դեպքում, եթե Սահմանադրական հանձնաժողովը լրացուցիչ փոփոխություններ է կատարել այդ գլուխներում՝ նախնական կարծիքում ներկայացված առաջարկությունների լրյսի ներքո կամ հաշվի առնելով զեկուցողների կողմից հաջորդիվ ներկայացված առաջարկությունները: Ուստի՝ առաջին նախնական կարծիքում ձևակերպված առանձին առաջարկությունները պահպանվում են, եթե դրանք չեն փոփոխվել կամ փոխարինվել երկրորդ նախնական կարծիքում:

11. Վերլուծության են ենթարկվել միայն բովանդակային փոփոխությունները: Այս կարծիքում ներկայացված վերլուծությունը սպառիչ չէ:

### III. Վերլուծություն

#### **Ա. Գլուխ 1. Սահմանադրական կարգի հիմունքները**

##### **Հոդված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը**

12. Նախնական կարծիքում առաջարկություն էր արվել սահմանադրական օրենքները ներառել իրավական նորմերի աստիճանակարգությանը վերաբերող դրույթում: 5-րդ հոդվածի 1-ին մասն այժմ ձևակերպված է հետևյալ կերպ. «[...] Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական իրավական ակտերը՝ Սահմանադրությանը, սահմանադրական օրենքներին և օրենքներին»: Այս փոփոխությունը ողջունելի է:

13. 5-րդ հոդվածը նշում չի պարունակում այնպիսի հատուկ համաձայնագրերի մասին, ինչպիսին նախատեսված է 17-րդ հոդվածում, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները: Սա

կարող է անորոշություն առաջացնել նման համաձայնագրերի վավերականության որոշման վերաբերյալ:

**Հոդված 6. Օրինականության սկզբունքը**

14. Ցանկալի կլիներ 6-րդ հոդվածն այնպես վերաձևակերպել, որպեսզի ընդգծվեր հրապարակման պարտադիր լինելու բնույթը (տես 129-րդ հոդված):

**Հոդված 17. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին**

15. Նախնական կարծիքում առաջարկություն<sup>1</sup> էր արվել, որ չնայած Հայաստանի հոգևոր կյանքում, ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու ունեցած կարևոր դերակատարությանը, հակասություն կար մի կողմից հայերի հոգևոր կյանքում դրա «բացառիկ» դերակատարության ճանաչման (17-րդ հոդված) և մյուս կողմից կրոնական կազմակերպությունների գործունեության ազատության (16-րդ հոդված) ու մտքի, խղճի և կրոնի ազատության (40-րդ հոդված) ճանաչման միջև:

16. Սահմանադրական հանձնաժողովը տեղեկացրել է Վենետիկի հանձնաժողովի զեկուցողներին, որ 17-րդ հոդվածում կիրառված հայերեն եզրույթի անգլերեն ճիշտ թարգմանությունը «exclusive»-ի փոխարեն պետք է լինի «unique», այսինքն՝ «բացառիկ»՝ «առանձնահատուկ» իմաստով: Այսպիսի թարգմանությունը ավելի համադրելի է 16-րդ և 40-րդ հոդվածների հետ այնքանով, որքանով այն արտահայտում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հատուկ պատմական առաքելությունը հայկական ազգային ինքնության պահպանման գործում, այլ ոչ թե այդ եկեղեցուն շնորհում է բացառիկ դիրք այլ դավանանքների նկատմամբ:

---

<sup>1</sup> Նախնական կարծիք, §§ 32, 33

## ***Բ. Գլուխ 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները***

### **Հոդված 23. Կյանքի իրավունքը: Մահապատժի արգելքը**

17. 23-րդ հոդվածում նախկին 2-րդ մասը հանելը ողջունելի է: 78-րդ և հաջորդիվ նախատեսված հոդվածներից, մասնավորապես 78-րդ և 81-րդ հոդվածներից պետք է ենթադրել, որ կյանքի իրավունքին միջամտությունները թույլատրելի են ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածում նախատեսված դեպքերում:

### **Հոդված 26. Անձնական ազատությունը**

18. Նախնական կարծիքում առաջարկություն<sup>2</sup> էր արվել ճկունության տարր ավելացնել 26-րդ հոդվածի 3-րդ մասում, որը նախատեսում էր յոթանասուներկու ժամվա սահմանափակում առանց դատարանի որոշման ձերբակալման համար: 26-րդ հոդվածի վերանայված տեքստն այժմ սահմանում է «ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում», ինչը ողջունելի է:

### **Հոդված 34. Ամուսնանալու ազատությունը**

19. Նախնական կարծիքում առաջարկություն<sup>3</sup> էր արվել կանանց և տղամարդկանց հավասարության մասին ընդհանուր դրույթից հանել «ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս» տղամարդկանց և կանանց հավասարության մասին 2-րդ մասը և այն նախատեսել 34-րդ հոդվածում: Այս առաջարկությունն ընդունվել է, ինչը ողջունելի է:

---

<sup>2</sup> Նախնական կարծիք, § 38

<sup>3</sup> Նախնական կարծիք, § 39

### **Հոդված 37. Կրթության իրավունքը**

20. 37-րդ հոդվածում կատարված փոփոխությունները արժանի են գովասանքի: Մասնավորապես՝ կարևոր է 3-րդ մասի նոր ձևակերպումը: 2-րդ մասում մրցութային հիմունքներ ձևակերպումը կարող է կասկածների տեղիք տալ. ենթադրվում է, որ ընդունման գործընթացում պետք է մրցույթ լինի: Նոր ձևակերպումը երաշխավորում է «մրցութային հիմունքներով» կրթության իրավունքը: Սա որոշակիորեն տարբերվում է կամ առնվազն հանգեցնում է թյուրըմբռնման:

### **Հոդված 38. Մարդու ազատ գործելու իրավունքը**

21. 38-րդ հոդվածը, որն ամրագրում է մարդու ազատության Կանտյան սկզբունքը իրավունքի գերակայության համատեքստում, արժանի է հատուկ գովասանքի: Դրա ձևակերպումը արժանի է հավանության, քանի որ այդ դրույթն այժմ դարձել է կարճ և հստակ:

### **Հոդված 47. Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը**

22. Նախնական կարծիքը<sup>4</sup> նշում էր, որ երկքաղաքացիություն ունեցող անձանց դեպքում ընտրվելու իրավունքը բացառելը և մշտական բնակության պահանջը խախտում էին միջազգային չափանիշները: Ազգային ժողովում ընտրվելու համար նախատեսված մշտական բնակության պահանջի հետ կապված՝ 47-րդ հոդվածը կրճատել է մշտական բնակության հինգ տարվա ժամկետը՝ այն դարձնելով չորս տարի: Արդյունքում նախարար դառնալու համար նախատեսված մշտական բնակության ժամկետը ևս կրճատվել է և դարձել չորս տարի, և վարչապետ դառնալու համար նախատեսված մշտական բնակության հատուկ յոթամյա ժամկետը վերացվել է (147-րդ հոդված):

23. Չնայած այս փոփոխություններն այս դրույթները ամբողջությամբ չեն համապատասխանեցնում միջազգային և եվրոպական չափանիշներին (հատկապես երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրվելու իրավունքի բացառման առումով), այնուամենայնիվ այս

---

<sup>4</sup> Նախնական կարծիք, § 54



փոփոխությունները հստակ բարելավվում են նախկին կարգավորումների համեմատ և ողջունելի են:

24. Նախնական կարծիքում «ծանր հանցագործության համար դատապարտված անձանց<sup>5</sup>»՝ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու արգելքի հետ կապված առաջարկություն էր արվել հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան<sup>6</sup> և այդ դրույթում համաչափության տարր ներառել: 47-րդ հոդվածի 4-րդ մասն այժմ սահմանափակել է արգելքը հետևյալ ձևակերպմամբ՝ «դիտավորությամբ կատարված ծանր հանցագործությունների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք»: Դրանով իսկ դրույթում ներկայացվել են համաչափության տարրեր, և այն համապատասխանում է ՄԻԵԴ-ի ամենաթարմ դատական պրակտիկային, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններին<sup>7</sup>:

25. 47-րդ հոդվածի 4-րդ մասը ընտրական իրավունքից զրկում է «դատական ակտով անգործունակ ճանաչված անձանց»: Այս լայն ձևակերպումը չի համապատասխանում Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված CM/Rec(2011)14 հանձնարարականին, որը վերաբերում է քաղաքական և հասարակական կյանքին<sup>8</sup> հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությանը, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի՝ Ընտրական հարցերում օրինակելի վարքագծի վերաբերյալ կանոնագրքի<sup>9</sup> մեկնաբանող հոչակագրին, որի համաձայն՝ «Ընդհանուր ընտրական իրավունք - 2. Հաշմանդամություն ունեցող անձը չի կարող զրկվել ընտրելու կամ ընտրվելու իրավունքից իր ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, եթե ընտրելու և

---

<sup>5</sup> Նախնական կարծիք, § 55

<sup>6</sup> ECtHR, GC, Hirst v. UK (No. 2), No. 74025/01, 18 January 2011; Scoppola v. Italy (No. 3), No. 126/05, 22 May 2012

<sup>7</sup> Վենետիկի հանձնաժողով, Իրավախախտներին պառլամենտից բացառման վերաբերյալ նախնական կարծիք, CDL-AD(2015)019

<sup>8</sup> Ընդունվել է 2011 թ. նոյեմբերի 16-ին նախարարների տեղակալների 1126-րդ հանդիպման ժամանակ:

<sup>9</sup> CDL-AD(2010)036

ընտրվելու իրավունքի արգելը սահմանվել է առանձին դատական որոշմամբ ապացուցված հոգեկան հաշմանդամության պատճառով: Ուստի՝ 47-րդ հոդվածի 4-րդ մասը պետք է ամրագրի անգործունակ ճանաչված անձանց ընտրական իրավունքից զրկելու հնարավորությունը միայն որոշ դեպքերում (օրենքով նախատեսված):

**Հոդված 53. Քաղաքական ապաստանի իրավունքը: Արտաքսման կամ հանձնման արգելքը**

26. Այս դրույթի 3-րդ մասն անհրաժեշտ է այնպես փոփոխել, որ հնարավոր լինի Հայաստանի կողմից Հռոմի ստատուտի վավերացումը:

**Հոդված 58. Սեփականության և ժառանգման իրավունքը: Հարկային պարտավորությունները**

27. Այս դրույթի 3-րդ մասի վերաձևակերպումը ավելի հստակ է սահմանում սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման համար օրենսդրական հիմքի և արդարացված նպատակի անհրաժեշտությունը, ինչը ողջունելի է:

**Հոդված 73. Օրենքների հետադարձ ուժը**

28. Այս դրույթն այժմ սահմանում է. «Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն», ինչը ողջունելի բարելավում է, չնայած որոշ բացառություններ կարող են ընդունելի լինել (օրինակ՝ որոշ հարկային օրենքների հետադարձ ուժը կարող է արդարացվել վերջին պահի սպեկուլյատիվ գործողությունների կանխման նպատակով):

**Գ. Գլուխ 4. Ազգային ժողովը**

**Հոդված 89. Ազգային ժողովի կազմը և ընտրության կարգը**

**Հոդված 201. Սահմանադրության ընդունումը և փոփոխությունը**

29. Նախնական կարծիքն<sup>10</sup> առաջարկում էր Սահմանադրությունում ամրագրել միայն ընտրական համակարգի հիմնական սկզբունքները, որպեսզի հնարավոր լիներ անհրաժեշտ ճկունություն ապահովել այդ համակարգի հետագա զարգացման համար, և ընտրությունների երկրորդ փուլի կարգավորումը թողնել Ընտրական օրենսգրքին:

30. Սահմանադրական հանձնաժողովի կողմից օգոստոսի 20-ին հաստատված և Վենետիկի հանձնաժողովի կողմից օգոստոսի 22-ին ստացված տեքստը պարունակում էր 89-րդ հոդվածի վերանայված տարբերակը, որը ներառում էր փոփոխություններ, ինչպես նաև ավելացված լրացուցիչ մաս:

31. Օգոստոսի 24-ին Վենետիկի հանձնաժողովի հետ հանդիպման արդյունքում 89-րդ հոդվածի 3-րդ մասը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքում կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Քաղաքական կոալիցիայի ձևավորման սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով»: 89-րդ հոդվածի 4-7-րդ մասերը հանվել են:

32. Նախկին համակարգի համեմատ ավելացվել է ընտրություններից հետո կոալիցիա կազմելու հնարավորությունը, ինչը կերաշխավորի կայուն մեծամասնության ձևավորումը: Այս դրույթը ընտրությունների արդյունքների հիման վրա կուսակցությունների միջև բանակցությունների հնարավորություն է բացում:

33. Ընտրությունների երկրորդ փուլն այլևս նախատեսված չէ որպես ընտրական համակարգի անհրաժեշտ հատկանիշ. այն «կարող է» (ոչ թե «պետք է») անցկացվել (եթե դա նախատեսված է Ընտրական օրենսգրքով): Այս լուծումը համապատասխանում է նախնական կարծիքում ներկայացված առաջարկությանը և ողջունելի է:

---

<sup>10</sup> Նախնական կարծիք, § 78-81

34. Բացի այդ, այժմ առաջարկվում է 89-րդ հոդվածը հանել 201-րդ հոդվածում թվարկված դրույթների ցանկից՝ որպես հանրաքվեի միջոցով փոփոխման ենթակա հոդված: Սա լրացուցիչ ողջունելի քայլ է Սահմանադրությունում ընտրական համակարգի կարծրացումը կանխելու համար:

35. Ընտրական օրենսգիրքը պետք է մանրամասն կարգավորի ընտրական համակարգը. եթե օրենսգիրքը նախատեսի ընտրությունների երկրորդ փուլ, ապա օրենսգիրքը, մասնավորապես, պետք է անդրադառնա «կայուն խորհրդարանական մեծամասնության» բնորոշմանը՝ որպես ընտրությունների երկրորդ փուլ չանցկացնելու պայման:

### **Հոդված 105. Ազգային ժողովի խմբակցությունները**

36. Նախնական կարծիքում առաջարկություն<sup>11</sup> էր արվել այդ դրույթից հանել նոր խմբակցություններ ձևավորելու արգելքը օրենսդրի ամբողջ պաշտոնավարման ընթացքում (2-րդ մասի 2-րդ նախադասություն): 105-րդ հոդվածի ամենավերջին տարբերակում այս ուղղակի արգելքը հանվել է: 105-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունն այժմ ձևակերպված է հետևյալ կերպ. «Խմբակցության մեջ ընդգրկվում են *միայն* (ընդգծումն ավելացված է) միևնույն կուսակցության կամ կուսակցությունների նախընտրական դաշինքի պատգամավորները»: Քանի որ այդ պատճառով նոր խմբակցություններ ձևավորելու լայն հնարավորություն չկա, ապա դա հնարավոր կլինի, օրինակ, կուսակցությունների բաժանման պարագայում: Հայկական իշխանությունները լրացուցիչ ընդգծել են, որ 115-րդ հոդվածի համաձայն՝ անվստահության քվեի նախաձեռնության դեպքում անվստահության քվեն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, որի դեպքում խորհրդարանական խմբակցությունները որևէ դերակատարություն չունեն:

37. 105-րդ հոդվածի ամենավերջին տարբերակը առաջընթաց է և ողջունելի է:

---

<sup>11</sup> Նախնական կարծիք, § 96-97

## **Դ. Գլուխ 5. Հանրապետության նախագահը**

38. Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի Սահմանադրության փոփոխությունների ուսումնասիրվող նախագիծը կառավարման համակարգի փոփոխություն է նախատեսում կիսանախագահական կառավարման համակարգից դեպի խորհրդարանական կառավարման համակարգ: Հանրապետության նախագահի լիազորությունները կտրուկ կրճատվել են և գրեթե միայն արարողակարգային բնույթ ունեն՝ համեմատած Եվրոպայում այլ խորհրդարանական ռեժիմներում նախագահների՝ որպես Սահմանադրության երաշխավորողների հետ:

### **Հոդված 124. Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը և նրան ներկայացվող պահանջները**

39. Առաջարկվում է Հանրապետության նախագահի թեկնածուի համար միայն Հայաստանի քաղաքացի լինելու չափանիշը սահմանափակել «վերջին վեց տարով» և կրճատել մշտական բնակության պահանջը՝ այն յոթից դարձնելով վեց տարի (Հայաստանի գործող Սահմանադրությամբ նախատեսված է տաս տարվա ժամկետ): Այս փոփոխությունը ողջունելի է:

## **Ե. Գլուխ 6. Կառավարությունը**

### **Հոդված 151. Կառավարության ծրագիրը**

40. 151-րդ հոդվածի 2-րդ մասը փոփոխվել է և այժմ խորհրդարանին վարչապետի կողմից ներկայացված ծրագրի հավանության համար պահանջվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Առանց այսպիսի բացարձակ մեծամասնության պահանջի ծրագրի հավանությունը (ինչպես, օրինակ, պետական բյուջեի ընդունման դեպքում 110-րդ հոդվածում) կարող է որոշակի ճկունություն հաղորդել կառավարության և Ազգային ժողովի միջև հարաբերությունների զարգացմանը, եթե նույնիսկ խորհրդարանի

կողմից կառավարության ծրագրին հավանություն տալու մերժման պարագայում ամեն դեպքում նախատեսված է Ազգային ժողովի վաղաժամկետ արձակում:

#### **Հոդված 154. Զինված ուժերը**

41. 154-րդ հոդվածում արված փոփոխությունները էականորեն ուժեղացնում են վարչապետի դիրքը: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն Հանրապետության նախագահի՝ վարչապետը չի ներկայացնում ժողովրդին, այլ ներկայացնում է քաղաքական մեծամասնությանը:

#### **Հոդված 156. Կառավարության վստահության հարցը**

42. Այս դրույթը պահանջում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը անվստահություն հայտնելու մասին որոշման ընդունման համար<sup>12</sup>: Այդ իսկ պատճառով անվստահության և վստահության քվեների համար պահանջվում է նույն մեծամասնությունը խորհրդարանում: Քանի որ վստահության քվեն նպատակաուղղված է կառավարությունում կայունության մեծացմանը, ցանկալի կլիներ նախատեսել պարզ մեծամասնության պահանջ: Հակառակ դեպքում օրենքի ընդունումը, որի առնչությամբ դրվել է կառավարության վստահության հարցը, հեշտացնելու փոխարեն դառնում է ավելի դժվար՝ սովորական գործընթացի հետ համեմատած, ինչը կարող է վստահության քվեն կառավարության համար դարձնել, ընդհակառակը, անարդյունավետ:

## ***2. Գլուխ 7. Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը***

#### **Հոդված 163. Դատավորի կարգավիճակը**

---

<sup>12</sup> Բացարձակ մեծամասնություն է պահանջվում, օրինակ, Գերմանիայում՝ 68-րդ հոդված, Մոլդովայում՝ 98-րդ հոդված, Ռումինիայում՝ 103-րդ հոդված, Հունգարիայում՝ 21-րդ հոդված, Խորվաթիայում՝ 110-րդ հոդված, Ալբանիայում՝ 104-րդ հոդված:

43. Նախնական կարծիքում առաջարկություն<sup>13</sup> է արվել հանել Ազգային ժողովի դերակատարությունը դատավորների (ներառյալ Վճռաբեկ դատարանի դատավորների) պաշտոնից ազատման գործընթացից:

44. Ազգային ժողովի որոշման պահանջն այժմ հանվել է, և 163-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ «դատավորի լիազորությունները Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու, տևական հիվանդության պատճառով պաշտոնավարման անհնարինության դեպքերում, ինչպես նաև էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում»: Այս փոփոխությունը արժանի է մեծ հավանության:

45. Նախնական կարծիքում առաջարկություն<sup>14</sup> էր արվել դատավորների լիազորությունների դադարեցման հիմքերը թվարկել Սահմանադրությունում (թվարկումն օրենքին վերապահելու փոխարեն) դատավորների անկախությունը երաշխավորելու նպատակով: 163-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերն այժմ թվարկում են դատավորների լիազորությունների դադարեցման հիմքերը, ինչն արժանի է մեծ հավանության:

46. Նախկին 9-րդ մասը նախատեսում էր մի սկզբունք, ըստ որի դատավորների վարձատրության չափը պետք է համապատասխաներ նմանատիպ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափին: Նախնական կարծիքը գտնում էր, որ դրական էր անհամաչափ վարձատրության չափ նախատեսող օրենսդրությունն անվավեր ճանաչելու որոշ հնարավորությունների ընձեռումը Սահմանադրական դատարանին, սակայն այդ կարգավորումը չափազանց անորոշ էր: Այդ մասն այժմ հանվել է, և 163-րդ հոդվածի 10-րդ մասն այժմ սահմանում է, որ «դատավորների վարձատրության չափը սահմանվում է օրենքով»: Այդ իսկ պատճառով ամբողջությամբ բացակայում է պատշաճ վարձատրության տարրը, ինչի կապակցությամբ ափսոսանք ենք հայտնում: Ցանկալի է վերաձևակերպել այս մասը:

---

<sup>13</sup> Նախնական կարծիք, § 152, 153

<sup>14</sup> Նախնական կարծիք, § 156

**Հոդված 164. Դատավորների և դատարանների (Վճռաբեկ դատարանի պալատների) նախագահների նշանակման (կամ ընտրության) կարգը, պաշտոնավարման ժամկետները**

47. Նախնական կարծիքում նաև առաջարկություն<sup>15</sup> էր արվել հանել Ազգային ժողովի դերակատարությունը Վճռաբեկ դատարանի դատավորների և պալատների նախագահների նշանակման գործընթացից. պահանջվող մեծամասնության շեմն այժմ բարձրացվել և դարձել է երեք հինգերորդ, ինչն առաջընթաց է: Ինչ վերաբերում է պալատների նախագահների նշանակմանը, ապա խորհրդարանի դերակատարությունը հանվել է, ինչը ողջունելի է:

**Հոդված 165. Սահմանադրական դատարանը**

48. 165-րդ հոդվածի 2-րդ մասում Սահմանադրությունից բացի անհրաժեշտ է ավելացնել նաև Սահմանադրական դատարանի մասին օրենքը:

**Հոդված 166. Սահմանադրական դատարանի կազմը և կազմավորման կարգը**

49. 2-րդ մասում Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության համար պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդ որակյալ մեծամասնության պահանջի նախատեսումը շատ ողջունելի է<sup>16</sup>:

50. 166-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրական դատարանի ինը դատավորներից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի առաջարկությամբ, երեքը՝ կառավարության առաջարկությամբ և երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: 166-րդ հոդվածի 3-րդ մասի վերանայված տարբերակն այժմ, ինչպես առաջարկվել է զեկուցողների կողմից, ճիշտ մասնավորեցնում է, որ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ ներկայացված թեկնածուները պետք է ընտրվեն «դատավորների կազմից»: Այս դրույթը կարելի է տեղափոխել 2-րդ մաս:

---

<sup>15</sup> Նախնական կարծիք, § 158

<sup>16</sup> Նախնական կարծիք, § 163



### **Հոդված 167. Սահմանադրական դատարանի լիազորությունները**

51. 167-րդ հոդվածում ավելացվել է «պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ որոշում կայացնելու» լիազորությունը, ինչը ողջունելի է: Այս լիազորությունը, այնուամենայնիվ, ենթադրում է փաստերի գնահատում, որը կարելի է թողնել Վճռաբեկ դատարանին:

52. Սահմանադրական դատարանին անհրաժեշտ է տալ լիազորություն չեղարկելու խորհրդարանական կամ նախագահական մանդատը կամ ընդհանուր ընտրությունը, եթե ապացուցվում է, որ այն հակասահմանադրական է կամ իրականացվել է *contra* կամ *extra lege* ճանապարհով:

### **Հոդված 169. Սահմանադրական դատարանի ակտերը**

53. 2-րդ և 3-րդ մասերի ձևակերպումից կարող է թվալ, որ Սահմանադրական դատարանը չի կարող ճանաչել հակասահմանադրականությունը *ab inito* կամ կայացնել հետադարձ ուժ ունեցող որոշումներ: Այնուամենայնիվ, այս դրույթներն արդեն կան գործող Սահմանադրությունում և Սահմանադրական դատարանի մասին օրենքի 68-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերը նախատեսում են այդ դատարանի որոշումների *ex tunc* ազդեցությունը: Այդ իսկ պատճառով Սահմանադրական դատարանի որոշումների *ex tunc* ազդեցությունը երաշխավորված է:

## **Է. Գլուխ 8. Դատախազությունը և քննչական մարմինները**

### **Հոդված 175. Դատախազությունը**

54. Դատախազության աստիճանակարգային բնույթը կարելի է արտացոլել 175-րդ հոդվածում: Դատախազության միասնական բնույթը կկանխի մասնագիտացված դատախազների ստեղծումը (օրինակ՝ կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով), ինչպես դա արվում է մի շարք եվրոպական երկրներում:

55. 175-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է մասնավորեցնի, որ 2-5-րդ կետերը վերաբերում են դատախազության դատախազական գործառույթներին: 4-րդ կետը («պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան») այժմ լրացվել է «առանձին դեպքերում» ձևակերպմամբ: Այս փոփոխությունը ողջունելի է և կարող է լրացուցիչ բարելավվել՝ ավելացնելով «բացառիկ» եզրույթը:

#### **Հոդված 176. Գլխավոր դատախազը**

56. 176-րդ հոդվածը սահմանում է, որ նույն անձը կարող է առավելագույնը երկու անգամ անընդմեջ վեց տարով նշանակվել գլխավոր դատախազ: 164-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է պաշտոնավարման մեկանգամյա վեցամյա ժամկետ Վճռաբեկ դատարանի նախագահի համար: Հայկական իշխանությունները բացատրել են, որ այս տարբերությունը պայմանավորված է այն փաստով, որ Վճռաբեկ դատարանի նախագահին իր պաշտոնավարման ավարտից հետո չի հեռանում դատական համակարգից, մինչդեռ գլխավոր դատախազը հեռանում է դատախազությունից:

### ***Ը. Գլուխ 9. Տեղական ինքնակառավարման մարմինները***

#### **Հոդված 180. Տեղական ինքնակառավարման մարմինները**

57. 180-րդ հոդվածը պետք է հստակ սահմանի, որ համայնքի ավագանիները ընտրվում են ուղղակի ընտրությամբ:

58. 180-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «համայնքի ղեկավարը պատասխանատու է ավագանու առջև»: Անորոշ է մնում, թե ինչպես պետք է իրագործվի այս պատասխանատվությունը: Օրինակ՝ արդյո՞ք այն ներառում է համայնքի ղեկավարին պաշտոնից ազատելու իրավունքը:

#### **Հոդված 181. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները**

59. 181-րդ հոդվածի 1-ին մասը համայնքների գործառույթներն ու լիազորությունները բաժանում է երեք խմբի՝ սեփական պարտադիր լիազորություններ, սեփական կամավոր լիազորություններ և պետության կողմից պատվիրակված լիազորություններ: Սեփական պարտադիր լիազորությունների և պետության կողմից պատվիրակված լիազորությունների միջև տարբերակումը անորոշ է, և դրա արդարացումը հարցական է: Ինչ վերաբերում է պետական վերահսկողությանը (187-րդ հոդված), ապա կարելի է նախատեսել ավելի ուժեղ վերահսկողություն այժմ որպես սեփական պարտադիր կոչվող լիազորությունների իրականացման նկատմամբ, քան պարզապես իրավական վերահսկողությունը:

**Հոդված 185. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ֆինանսական ապահովումը**

184-րդ հոդվածի 3-րդ մասից և 185-րդ հոդվածի 1-ին մասից հստակ չէ, թե արդյո՞ք տեղական ինքնակառավարման մարմինները ազատ են սահմանելու տեղական հարկեր, թե՞ նրանք կաշկանդված են ազգային օրենքով դրանց սահմանմամբ:

***Թ. Գլուխ 10. Մարդու իրավունքների պաշտպանը***

61. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը նախատեսված է գործող Սահմանադրության 83.1 հոդվածով: Սահմանադրության փոփոխությունների նախագծում այս ինստիտուտին նվիրված է մեկ ամբողջական գլուխ, որտեղ նախատեսված են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմքերը և ուժեղ երաշխիքներ:

**Հոդված 191. Մարդու իրավունքների պաշտպանի անկախությունը**

62. Նախնական կարծիքը ողջունել էր այն դրույթը, ըստ որի Մարդու իրավունքների պաշտպանը չի կարող հեռացվել պաշտոնից, ինչը շատ մեծ երաշխիք է Մարդու իրավունքների պաշտպանի անկախության համար: Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանի մանդատի (բացառիկ դեպքերում) հետ կանչման դրույթ նախագծում չկար: 191-րդ

հողվածը այժմ սահմանում է. «Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարում են նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից»: Այս դրույթը չափազանց լայն է ձևակերպված. որակազրկող դատապարտումը պետք է վերաբերի միայն սահմանափակ թվով առավել ծանր հանցանքներին, որոնք նախատեսվում են Սահմանադրությամբ:

### ***Ժ. Ընդհանուր նկարագրումներ 11-14-րդ գլուխների վերաբերյալ***

63. 11-14-րդ գլուխները սահմանադրական ամրագրում են նախատեսում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, Վերահսկիչ պալատի և Կենտրոնական բանկի համար: Այս ինստիտուտների սահմանադրականացումը ողջունելի է, քանի որ դրանց գոյությունը և գործառույթները երաշխավորվել են, և խորհրդարանական մեծամասնությունները կարող են կարգավորել դրանք սահմանադրական սահմանափակումների շրջանակում:

64. Հասկանալի և նաև ողջունելի է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ընդգծում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, Վերահսկիչ պալատի և Կենտրոնական բանկի անդամների/նախագահների ոչ քաղաքական, մասնագիտական բնույթը: Այսպիսի որակավորումը առնչվում է անկախության և չեզոքության խիստ պահանջին: Այնուամենայնիվ, այս մարմինների անդամների կամ նախագահների համար նախատեսված քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը և հրապարակային ելույթներում զսպվածություն ցուցաբերելու պահանջը կարող են առաջացնել այնպիսի իրավական անորոշություն, որը նոր վտանգ կառաջացնի այդ մարմինների անկախության համար, մասնավորապես՝ քանի որ արգելքի կամ պարտականության խախտումը կարող է հանգեցնել պաշտոնից հեռացման:

## ***Ի. Գլուխ 11. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը***

### **Հոդված 194. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմը և կազմավորման կարգը**

65. Ցանկալի կլիներ Սահմանադրությունում նախատեսել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և անդամների թեկնածուներ առաջադրելու ընթացակարգը, ինչպես նաև սահմանել, թե որ սուբյեկտներն իրավունք ունեն առաջադրելու համապատասխան թեկնածուներին:

## ***Լ. Գլուխ 12. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը***

### **Հոդված 195. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործառույթները և լիազորությունները**

66. Երկրորդ մասում կարելի է հստակեցնել, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից կայացված որոշումները պետք է պատշաճ պատճառաբանվեն Մեկտեքս ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ի կայացրած որոշմանը համապատասխան<sup>17</sup>:

67. 5-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Ցանկալի է նախատեսել Սահմանադրությունում, որ այս ակտերը պետք է հրապարակվեն:

### **Հոդված 196. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կազմը և կազմավորման կարգը**

---

<sup>17</sup> ECtHR, Meltex Ltd and Mesrop Movsesyan v. Armenia, No. 32283/04, 17 June 2008.

68. 196-րդ հոդվածը պարունակում է մի շարք երաշխիքներ, որոնք նպատակաուղղված են երաշխավորելու քաղաքական ուժերի և տնտեսական շահերի ազդեցության դեմ պաշտպանությունը: Նմանատիպ չափանիշ կարելի է գտնել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համապատասխան օրենսդրություններում, մասնավորապես՝ Գերմանիայում կամ Ավստրիայում: Կարելի է նաև պնդել, որ պահպանվել են Հեռարձակման ոլորտում կարգավորիչ մարմինների անկախության և գործառույթների մասին R (2000) 23 հանձնարարականի չափորոշիչները: Իհարկե, ենթասահմանադրական օրենսդրությունը պետք է նախատեսի լրացուցիչ իրավական շրջանակներ: 5-րդ մասի 2-րդ նախադասության ձևակերպումը կարող է միայն ծառայել որպես ուղենիշ, որը պետք է կատարելագործվի Հայաստանի պրակտիկայում և քաղաքական մշակույթում:

69. Ցանկալի կլիներ Սահմանադրությունում նախատեսել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի և անդամների թեկնածուներ առաջադրելու ընթացակարգը, ինչպես նաև սահմանել, թե որ սուբյեկտներն իրավունք ունեն առաջադրելու համապատասխան թեկնածուներին:

### ***Խ. Գլուխ 13. Վերահսկիչ պալատը***

#### **Հոդված 197. Վերահսկիչ պալատի գործառույթները և լիազորությունները**

70. Ցանկալի կլիներ Սահմանադրությունում նախատեսել Վերահսկիչ պալատի նախագահի և անդամների թեկնածուներ առաջադրելու ընթացակարգը, ինչպես նաև սահմանել, թե որ սուբյեկտներն իրավունք ունեն առաջադրելու համապատասխան թեկնածուներին:

71. Ընթացիկ եզրակացությունների համակարգը տարածված է պետություններում և որոշ հանգամանքներում կարող է անհրաժեշտ լինել: Ընդունելի է համարվում այդ որոշման պատվիրակումը օրենսդրին:

72. Վերահսկիչ պալատն իրավունք ունի իրավաբանական անձանց մոտ ստուգումներ կատարել միայն այն դեպքերում, երբ պետությունը դրանցում ունի էական մասնակցություն, կամ այն ֆինանսական միջոցների մասով, որոնք նրանք ստացել են պետության կողմից, կամ երբ նրանց պարտավորությունների համար պետությունը երաշխիքներ է տվել: «էական մասնակցություն» բառերն անորոշ են: Հստակ չէ նաև, թե ինչու է ստուգման լիազորությունը սահմանափակված միայն պետության մասնակցությամբ՝ հաշվի առնելով, որ Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացնում ոչ միայն պետական բյուջեի, այլ նաև համայնքային բյուջեների միջոցների օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ:

#### ***Ծ. Գլուխ 14. Կենտրոնական բանկը***

73. Ցանկալի կլիներ Սահմանադրությունում նախատեսել Կենտրոնական բանկի նախագահի թեկնածուներ առաջադրելու ընթացակարգը, ինչպես նաև սահմանել, թե որ սուբյեկտներն իրավունք ունեն առաջադրելու համապատասխան թեկնածուներին:

#### ***4. Գլուխ 15. Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն***

##### **Հոդված 201. Սահմանադրության ընդունումը և փոփոխությունը**

74. 201-րդ հոդվածի համաձայն՝ այսուհետ հանրաքվեով են ընդունվելու նոր Սահմանադրությունը և որոշ գլուխների ու դրույթների փոփոխությունները (տես վերը՝ 34-րդ կետ): Այս կարգավորումը ավելի ճկուն է դարձնում Սահմանադրության փոփոխումը և ողջունելի է<sup>18</sup>:

---

<sup>18</sup> Ավելի ճկուն մեխանիզմների անհրաժեշտության մասին տես Վենետիկի հանձնաժողով, CDL-AD(2004)044, § 70

75. Սահմանադրության փոփոխությունների նախագիծը նախատեսում է քաղաքացիական նախաձեռնության կարգով Սահմանադրության փոփոխությունների հնարավորություն ինչպես հանրաքվեով անցկացվող փոփոխությունների, այնպես էլ Ազգային ժողովի իրավասությանը պատկանող փոփոխությունների պարագայում: Պահանջվող ստորագրությունների քանակը հարաբերականորեն բարձր է՝ 200 000, համապատասխանաբար 150 000, և նույնիսկ հանրաքվեի դեպքում Ազգային ժողովում նախաձեռնության օգտին պահանջվում է որակյալ մեծամասնություն: Սա կրճատում է քաղաքական անկայունության վտանգը, որն այլապես կարող են առաջացնել հաճախակի քաղաքացիական նախաձեռնությունները:

**Հոդված 202. Սահմանադրության անփոփոխելի հոդվածները**

76. 202-րդ հոդվածը հռչակում է, որ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 202-րդ հոդվածները անփոփոխելի են: «Անփոփոխելի սահմանադրական իրավունքի» համակարգը գոյություն ունի այլ իրավական համակարգերում ևս, ինչպես օրինակ Գերմանիայում (Հիմնական օրենքի 79-րդ հոդվածի 3-րդ մաս):

**Հոդված 203. Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ հանրաքվեն**

70. Նոր 203-րդ հոդվածը (որն անգլերեն տարբերակում որոշակի խմբագրման կարիք ունի) հանրաքվեի անցկացման հնարավորություն է նախատեսում այն դեպքում, եթե քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագիծը մերժվում է Ազգային ժողովի կողմից: Այս դրույթի տեղակայումը 15-րդ գլխում («Սահմանադրության փոփոխությունը») ճիշտ չէ, քանի որ այս ռեժիմը ակնհայտորեն չի կիրառվում սահմանադրական օրենքների դեպքում (3-րդ մաս, կետ 1):

**Հոդված 204. Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ և տարածքային ամբողջականության հարցով հանրաքվեն**

77. 204-րդ հոդվածում կիրառված «վերպետական» եզրույթը կարող է սահմանման կարիք ունենալ:



### **Հոդված 205. Հանրապետության նախագահի կողմից հանրաքվեի նշանակումը**

78. 205-րդ հոդվածը Հանրապետության նախագահի կողմից հանրաքվեի նշանակելու ժամկետային սահման է նախատեսում՝ համապատասխան *որոշման* ընդունվելուց հետո՝ ոչ շուտ, քան 50, և ոչ ուշ, քան 65 օրվա ընթացքում: Անհրաժեշտ է հստակեցնել, որ այդ ժամկետային սահմանափակումը կիրառվում է ոչ միայն «որոշումների», այլ նաև *նախագծի* դեպքում (206-րդ հոդված): Մյուս կողմից մեծամասնության պահանջները գործում են նաև վերապետական միջազգային կազմակերպությանը միանալու «որոշման» դեպքերում:

### **Հոդված 206. Հանրաքվեի դրված նախագծի ընդունումը**

79. 206-րդ հոդվածի համաձայն՝ հանրաքվեի դրված նախագիծն (ակտը՝) ընդունվում է, «եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը»:

80. Հանրաքվեի դեպքում օրինակելի պրակտիկայի վերաբերյալ կանոնագրքի<sup>19</sup> համաձայն՝ «խորհուրդ է տրվում չնախատեսել ա) նվազագույն քվորում (անցումային շեմ, նվազագույն տոկոս), քանի որ դա կլանում է ձեռնպահ քվեարկողներին կամ «ոչ» քվեարկողներին, բ) հավանության քվորում (գրանցված ընտրողների նվազագույն տոկոսի կողմից հավանություն), քանի որ այն դժվար քաղաքական վիճակ առաջացնելու վտանգ է պարունակում այն դեպքում, երբ նախագիծն ընդունվում է պարզ մեծամասնությամբ, որը, սակայն, ավելի քիչ է, քան անհրաժեշտ անցումային շեմը»: 206-րդ հոդվածի չը համապատասխանում այս առաջարկություններին:

## **Հ. Գլուխ 16. Եզրափակիչ և անցումային դրույթներ**

### **Հոդված 208. Սահմանադրության առանձին դրույթների ուժի մեջ մտնելը**

---

<sup>19</sup> Վենետիկի հանձնաժողով, Հանրաքվեի դեպքում օրինակելի պրակտիկայի վերաբերյալ կանոնագիրք, կետ 7, CDL-AD(2007)008

81. Խնդրահարույց է 208-րդ հոդվածի 4-րդ մասում Սահմանադրության հոդվածի ուժի մեջ մտնելը կախվածության մեջ դնել (ոչ սահմանադրական) օրենքից: Հաշվի առնելով 209-րդ հոդվածի 2-րդ մասը՝ անհրաժեշտ է ուղղակիորեն նախատեսել 2016 թ. հունիսի 1-ը որպես ուժի մեջ մտնելու օր:

#### **Հոդված 209. Օրենքների համապատասխանեցումը Սահմանադրության փոփոխությունների**

82. 209-րդ հոդվածի 1-ին մասում նախընտրելի է նախատեսել հստակ ժամկետ «ողջամիտ ժամկետում» հասկացության փոխարեն, օրինակ՝ «մեկ տարի»:

83. Արդյո՞ք 209-րդ հոդվածի 4-րդ մասը պետք է հղում անի «օրգանական օրենքներին» «սահմանադրական օրենքների փոխարեն»: Խորհուրդ չի տրվում Սահմանադրության դրույթի ուժի մեջ մտնելու համար նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնմանը հղում կատարելը:

84. Համանման նկատառումները կիրառելի են 5-րդ և 6-րդ մասերի համար:

## **IV. Եզրահանգումներ**

85. Հայաստանի Սահմանադրական հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքը չափազանց բարձր որակի է և արժանի է աջակցության ու դրվատանքի: Վենետիկի հանձնաժողովի հետ անկեղծ երկխոսության և արգասաբեր փոխանակումների մթնոլորտը շարունակական է եղել և հնարավորություն է ընձեռել Սահմանադրական հանձնաժողովին պատրաստել մի տեքստ, որն այժմ համապատասխանում է միջազգային չափանիշներին:

86. Առաջին նախնական կարծիքը պարունակում էր չորս հիմնական առաջարկություն, որոնք բոլորն էլ լրիվ կամ մասնակի հաշվի են առնվել Սահմանադրական հանձնաժողովի կողմից.

- Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու լինելու սահմանափակումների վերացման մասով (47-րդ հոդվածի 2-րդ մաս) բնակության ցենզը իջեցվել է 5-ից 4 տարվա, ինչը բարելավում է: Սակայն երկքաղաքացիների համար ԱԺ պատգամավոր ընտրվելու արգելքը, այնուամենայնիվ, չի հանվել:
- 89-րդ հոդվածն այլևս չի նախատեսում, որ ընտրությունների երկրորդ փուլը պարտադիր *պետք է* անցկացվի, այլ սահմանում է, որ *կարող է* անցկացվել: Ավելին, 89-րդ հոդվածը հանվել է 201-րդ հոդվածով նախատեսված այն սահմանադրական նորմերի շարքից, որոնք ենթակա են փոփոխության միայն հանրաքվեով: Այս մասով նախնական կարծիքում արված առաջարկին հետևել են, ինչը ողջունվում է:
- 105-րդ հոդվածից հանվել է ուղղակի արգելքը Ազգային ժողովի լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում նոր խմբակցություններ ձևավորելու վերաբերյալ, ինչը բարելավում է՝ չնայած այն բանին, որ նոր խմբակցություններ ձևավորելու հնարավորությունը մնում է սահմանափակ:
- Ազգային ժողովի դերը Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման հարցում պատշաճորեն հանվել է: Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրությանը, ապա պահանջվող մեծամասնությունն այժմ բարձրացվել է երեք հինգերորդի, ինչը բարելավում է:

87. Սույն երկրորդ միջանկյալ կարծիքը պարունակում է հետագա բարելավման որոշակի առաջարկություններ, որոնք, հուսով ենք, հաշվի կառնվեն Սահմանադրական հանձնաժողովի և Ազգային ժողովի կողմից:

88. Վենետիկի հանձնաժողովը մեկ անգամ ևս ընդգծում է Հայաստանի քաղաքական բոլոր ուժերի և քաղաքացիական հասարակության հետ բաց և շարունակական երկխոսության կարևորությունը, որպեսզի այս սահմանադրական փոփոխությունները ընդունվեն խորհրդարանի կողմից, իսկ հետագայում հանրաքվեով, ինչը հետագա կարևոր քայլ կհանդիսանա դեպի ժողովրդավարություն Հայաստանի անցման համար: